

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 7

18.12.2019թ. կնքված N ՀՀԲԿ-ԳՀԱՇՁԲ-19/37-2 գնման պայմանագրի

ք. Երևան

«18» «01» 2022թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայնախագիծ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Գ. Ազիզյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (Երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզի «Արագածոտն-2», «Արագածոտն-5», «Արագածոտն-10», «Արագածոտն-11», ՀՀ Շիրակի մարզի «Շիրակ-1», «Շիրակ-2», «Շիրակ-4», «Շիրակ-5», «Շիրակ-6», «Շիրակ-7», ՀՀ Գեղարքունիքի մարզի «Գեղարքունիք-3» և ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի միկրոռեզիդենս մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 18.12.2019թ. կնքված ՀՀԲԿ-ԳՀԱՇՁԲ-19/37-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ հաստատել 2022 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը բաղկացած է 2 (երկու) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030153, 900011030161
ՀՎՀՀ 02565827

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հայնախագիծ» ԲԲԸ
ք. Երևան, Չարենցի 1
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470067235860000
ՀՎՀՀ 01503291

Գլխավոր քարտուղար՝

Տնօրեն՝

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Գ. Ազիզյան
(ստորագրություն)



Handwritten signatures in blue ink at the bottom of the document.

